թից մի հրովարտակ հանեց, եկաւ մի այլ եկեղեցի շինեց։ Այս եկեղեցւոյ զարդք վերջին պատերազմին կողոպտուած էին։ Այժմ ունին քահանայ մի Վարագայ աշակերտներէն, բայց ոչ ուսումնարան։

Կաթողիկք ունին երկու քահանայ և մի զարքացած երիտասարդ վարդապետ, որ Վիէննայի Մխիթարեան վանքը սովորած է, ունին նա և մի անշուք ուսումնարան ձմեռուան համար։

Այս գիւղացիք գործունեայ չարքաշ ժողովուրդ մի են, կը բուծանեն անասունք, կը սերմանեն ցորեան, գարի, կտաւատ, կորեկ, գետնախնձոր. կաճեցնեն և կը վաճառեն Աբաշկերտի ամբողջ գիւղացւոց համար ամեն տեսակ բանջարեղէն, սոխ, սխտոր, բազուկ, կարմիր բազուկ, շողգամ, լուբեայ, սիսեռ, ձմերուկ, վարունգ, խրա[1], շամամ, դդում, գետնախնձոր։

Ունին ուղտ իջեցնելու համար մեծ մեծ պանդոկներ Պարսկաստանից անցնող կարաւանի համար։

Գիւղս թէ և խճուղիից 1/4 ժամ յարևելս կընկնայ, սակայն շատ անգամ ուղտապանք ստիպուած գիւղս պիտի պատահին, որով գիւղացին կը վաճառէ խոտ, առւոյտ, գարի։

Գիւղիս մէջ կայ եօթն հատ առևտրական կրպակ, 3 ձիթհանք, 5 ջրաղացք։

Գիւղիս հիւսիսային կողմից մի ճանապարհ կը բաժանուի ի Կարին գնալու համար, տակաւ առ տակաւ հիւսիսային արևմուտք շեղուելով՝ կանցնի Դրամներու հիւսիսից, լեռնէլեռ կը մտնէ Ցէլի-Բաբա, որ Բասեանի կը պատկանի։

---

1. Խրան սեռի տեսակն է, բայց Բագրեւանդայ դաշտի մէջ խակ կը մնայ, ուշ սերմանուելուն համար։